ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ-ի օգոստոսի 31-ին տեղի ունեցավ ՇՊՀ-ի ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի՝ 2022-2023 ուսումնական տարվա 1-ին նիստը՝ մասնակցությամբ մանկավարժական ողջ հանրույթի:

Օրակարգում՝

1.ՇՊՀ-ի ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի նոր կազմի ներկայացում և հաստատում տնօրենի ԺՊ-ի կողմից / զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան /

2.ՇՊՀ-ի ավագ դպրոցում 2022-2023 ուսումնական տարվա աշխատակարգի և աշխատանքային շաբաթվա տևողության մասին / զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան /

3.ՇՊՀ-ի ավագ դպրոցի ներքին կարգապահական կանոնների մասին / զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան /

4.ՇՊՀ-ի ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման տարեկան ծրագրի / պլանի / ընդունում / զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան /

5.ՇՊՀ-ի ավագ դպրոցում 2022-2023 ուսումնական տարվա 10-րդ դասարաններում հոսքերի ձևավորման մասին / զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան /

6.ՇՊՀ-ի ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա ուսումնական պլանի, դպրոցական բաղադրիչի բաշխման, դասաբաշխման, դասարանների համակազմի, կոմպլեկտավորման, դասղեկների առարկայական մեթոդական միավորումների նախագահների նշանակման մասին / զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան /

7.ՇՊՀ-ի ավագ դպրոցում 2022-2023 ուսումնական տարվա պետական չափորոշչին համապատասխան ուսումնական հիմնական ծրագրերի իրագործման խնդիրների մասին / զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան /

8.ա.ՇՊՀ-ի ավագ դպրոցում 2022-2023 ուսումնական տարում արտադասարանական աշխատանքների կազմակերպման մասին

8.բ.ՇՊՀ-ի ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի համադպրոցական միջոցառումների պլանի հաստատման մասին / զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան /

9.Ընթացիկ հարցեր.

Լսեցին 1.

դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին,որը ներայայացրեց 2022-2023 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի կազմը `ըստ գործող կարգի՝ բաղկացած դպրոցի տնօրենից, տնօրենի տեղակալներից, դասղեկներից, առարկայական մեթոդական միավորումների նախագահներից, դասավանդող ուսուցիչներից՝ առաջադրված առարկայական մեթոդական միավորումներից:

| Հ/Հ | Մանկավարժական խորհրդի ազգանունը անունը,հայրանունը | Ծննդյան թիվ | Կրթությունը | Դասավանդվող առարկան | Տարակարգ,գիտական կոչում | Աշխատանքային ստաժ | Ում կողմից է առաջադրվել | Մանկավարժական խորհրդի անդամ է ի պաշտոնե |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Դարբինյան Կարեն Ս. | 1975 | Բարձր. | Պատմ. | | 22 | | նախագահ |
| 2 | Մուրադյան Ինեսսա Ս. | 1984 | Բարձր. | Անգլ. | | 15 | | ՈւԱ գծով տնօրենի տեղակալ |
| 3 | Չավուշյան Արթուր Ա. | 1981 | Բարձր. | Պատմ. | | 15 | | ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ |
| 4 | Վարդանյան Մարիամ Ա. | 1991 | Բարձր. | հ.լ.և գ. | 1 տ. | 8 | | |
| 5 | Սարգսյան Նունե Զ. | 1966 | Բարձր. | հ.լ.և գ. | | 28 | | |
| 6 | Լուլիկյան Կարինե Ա. | 1955 | Բարձր. | հ.լ.և գ. | | 33 | | |
| 7 | Բեգլարյան Գոհար Վ. | 1956 | Բարձր. | հ.լ.և գ. | | 43 | | |
| 8 | Հակոբյան Աստղիկ Ա. | 1975 | Բարձր. | հ.լ.և գ. | | 22 | | |
| 9 | Մանուկյան Լաուրա Վ. | 1990 | Բարձր. | հ.լ.և գ. | | 10 | | դասղեկ,մ/մ |
| 10 | Հարությունյան Սաթենիկ Վ. | 1997 | Բարձր. | մաթ. | | 2 | | մ/մ |
| 11 | Սուլթանյան Աստղիկ Ա. | 1950 | Բարձր. | մաթ. | | 51 | | |
| 12 | Խաչատրյան Մելինե Վ. | 1989 | Բարձր. | մաթ. | | 10 | | |
| 13 | Իկիլիկյան Լուսինե Վ. | 1971 | Բարձր. | Գերմ. | | 29 | | |
| 14 | Խաչատրյան Նաիրա Գ. | 1993 | Բարձր. | Գերմ. | | 3 | | |
| 15 | Մխիթարյան Անահիտ Հ. | 1977 | Բարձր. | Ֆրանս | | 2 | | դասղեկ |
| 16 | Աբրահամյան Նարինե Հ. | 1965 | Բարձր. | Անգլ. | 1տ. | 33 | | |
| 17 | Վարդանյան Նունե Կ. | 1966 | Բարձր. | Անգլ. | | 33 | | դասղեկ,մ/մ |
| 18 | Սարգսյան Արփինե Հ. | 1985 | Բարձր. | Անգլ. | | 6 | | |
| 19 | Մկրտչյան Կարինե Ա. | 1979 | Բարձր. | Անգլ. | | 19 | | |
| 20 | Միքայելյան Ասյա Հ. | 1992 | Բարձր. | Անգլ. | | 8 | | |
| 21 | Իկիլիկյան Անահիտ Լ. | 1971 | Բարձր. | Կենս. | | 29 | | դասղեկ |
| 22 | Եղիազարյան Նարինե Հ. | 1962 | Բարձր. | Կենս. | | 27 | | դասղեկ,մ/մ |
| 23 | Գաբրիելյան Բելա Ռ. | 1973 | Բարձր. | Ռուս.լ | | 21 | | |
| 24 | Գրիգորյան Արմենուհի Զ. | 1966 | Բարձր. | Ռուս.լ | | 34 | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25 | Նահապետյան Անի Վ. | 1989 | Բարձր. | Պատմ. | 1տ. | 8 | | |
| 26 | Մելքոնյան Արմեն Գ. | 1992 | Բարձր. | Պատմ. | | 5 | | |
| 27 | Խաչատրյան Լաուրա Ս. | 1968 | Բարձր. | Պատմ. | | 30 | | դասղեկ մ/մ |
| 28 | Միքայելյան Անուշ Ա. | 1990 | Բարձր. | Պատմ. | | 8 | | |
| 29 | Կարապետյան Լիլիթ Գ. | 1988 | Բարձր. | Հաս. | | 12 | | դասղեկ |
| 30 | Մարտիրոսյան Գեղանի Գ. | 1979 | Բարձր. | Քիմիա | | 22 | | դասղեկ |
| 31 | Պետրոսյան Գոհար Ռ. | 1961 | Բարձր. | Քիմիա | | 38 | | |
| 32 | Մանվելյան Անի Պ. | 1990 | Բարձր. | Ֆիզիկա | | 8 | | |
| 33 | Գալստյան Ելենա Վ. | 1991 | Բարձր. | Ֆիզիկա | | 8 | | դասղեկ |
| 34 | Հովհաննիսյան Լիլիթ Գոռի | 1998 | Բարձր. | Աշխ. | | 1 | | |
| 35 | Հովհաննիսյան Ալմարա Ռ. | 1967 | Բարձր. | Ինֆ. | | 33 | | |
| 36 | Թառլոյան Լարիսա Ա. | 1990 | Բարձր. | Ֆիզկ. | | 8 | | դասղեկ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Հաստատված է տնօրենի 31.08.2022թ թիվ 1 հրամանով:

Լսեցին 2

դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին ՇՊՀ-ի ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա աշխատակարգի և աշխատանքային շաբաթվա տևողության մասին:

Ղեկավարվելով ՇՊՀ-ի և ՇՊՀ-ի ավագ դպրոցի կանոնադրությունների համապատասխան դրույթներով, հաշվի առնելով առարկայական մեթոդական միավորումների ,ծնողական խորհրդի,ուսուցչական հանրույթի առաջարկությունները՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1. 2022-2023 ուսումնական տարում ուսումնական պարապմունքները անցկացնել հինգօրյա, միահերթ աշխատակարգով, յոթ դասաժամով:
2. Ուսումնական պարապմունքներն սկսել ժամը 9-ին դասաժամերի միջև ընդմիջումը հինգ րոպե, երկրորդ դասաժամից հետո 10 րոպե ընդմիջում, ուսումնական պարապմունքներն ավարտվում են 14 : 50-ին:

Լսեցին 3

Դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին, որը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարում դպրոցի ներքին կարգապահական կանոնները, սովորողների կյանքին առողջության պարտադիր պահպանման դրույթները:

Ղեկավարվելով Շիրակի պետական համալսարանի Կանոնադրության համապատասխան դրույթներով՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

Հաստատել տնօրենի ԺՊ-ի կողմից ներկայացված ուսումնառության ներքին կարգապահական կանոնների, սովորողների կյանքի և առողջության պահպանման նախագիծը, 2022-2023 ուսումնական տարում առաջնորդվել վերոհիշյալ նախագծի դրույթներով:

Լսեցին 4

Դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին, որը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացմանտարեկան ծրագիրը/ պլանը /՝ բաղկացած ներքոհիշյալ բաժիններից՝ Ներածություն

I բաժին – Կազմակերպչական աշխատանքներ
II բաժին- Ուսումնադաստիարակչական աշխատանքներ
III բաժին-Առարկայական մեթոդական միավորումներ
IV բաժին- Դասղեկական աշխատանքներ
V բաժին- Արտադասարանական, արտադպրոցական դաստիարակչականաշխատանքներ
VI բաժին-Մանկավարժական խորհրդի նիստեր
VII բաժին-Աշխատանք ծնողների հետ
VIII բաժին-Աշակերտական ինքնակառավարում
IX բաժին- Աշխատանք գրադարանի հետ
X բաժին- Սանիտարահիգիենիկ միջոցառումներ
XI բաժին – Ներդպրոցական գործունեության վերահսկում
XII բաժին- Դպրոցի համագործակցության ոլորտները ուսումնադաստիարակչական աշխատանքների համատեքստում
XIII բաժին- Մանկավարժների վերապատրաստումներ
XIV բաժին – ֆինանսատնտեսական գործունեություն,ուսումնանյութական բազայի ամրապնդում

Հիմք ընդունելով տնօրինության, առարկայական մեթոդական միավորումների կողմից առաջարկված համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման ծրագրի / պլանի / նախագիծը,հաշվի առնելով արված առաջարկությունները՝ մանկավարժական խորհուրդը դպրոցի Կանոադրության համապատասխան դրույթների համաձայն՝

Որոշում է

Հավանություն տալ ՇՊՀ-ի ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման տարեկան ծրագրին/ պլանին / և ներկայացնել ՇՊՀ-ի ռեկտոր Ե.Սերոբյանի հաստատմանը:

Լսեցին 5

դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին, 2022-2023 ուսումնական տարում 10-րդ դասարան ընդունվել են 91 աշակերտներ: Ըստ ծնողների դիմումների՝ ձևավորվել են հումանիտար հոսքի 3 դասարաններ՝ 66 աշակերտներով, բնագիտամաթեմատիկական հոսքի մեկ դասարան՝ տնտեսագիտական և կենսաքիմիա ենթահոսքերով՝ 25 աշակերտներով:

Ղեկավարվելով ՇՊՀ-ի ավագ դպրոցի Կանոնադրության համապատասխան դրույթներով,հիմք ընդունելով 2022-2023 ուսումնական տարում 10-րդ դասարանում հոսքերի ձևավորման մասին տնօրենի ներկայացրած նախագիծը, ծնողական խորհրդի առաջարկությունը և մանկավարժների կարծիքը՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

ՇՊՀ-ի ավագ դպրոցում 2022-2023 ուսումնական տարում, սահմանված կարգի համաձայն, ձևավորել հումանիտար հոսքի 3 տասներորդ դասարան՝ 66 աշակերտներով, բնագիտամաթեմատիկական հոսքի մեկ 10-րդ դասարան՝ տնտեսագիտական և կենսաքիմիա ենթահոսքերով՝ 25 աշակերտներով:

Լսեցին 6

Դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին 2022-2023 ուսումնական տարվա 10-ից 12-րդ դասարանների ուսումնական պլանների, դպրոցական բաղադրիչի բաշխման նախագծերը, դասաբաշխումը, ձևավորված դասարանների համակազմը, կոմպլեկտավորումը, դասղեկներին , առարկայական մեթոդական միավորումների նախագահներին, 10-ից 12-րդ դասարանների առաջին կիսամյակի դասացուցակը:

Ղեկավարվելով ՇՊՀ-ի ավագ դպրոցի Կանոնադրության համապատասխան դրույթներով, հիմք ընդունելով դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա 10-ից 12-րդ դասարանների ուսումնական պլանի, դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին տնօրենի ԺՊ-ի ներկայացրած նախագիծը՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

6.1 -2022-2023 ուսումնական տարվա 10-ից 12-րդ դասարանների ուսումնական պլանով դպրոցական բաղադրիչի ժամաքանակը, ըստ ուսումնական և

երաշխավորված առարկայացանկի առարկաների , ըստ առարկայական մեթոդ միավորումների կողմից արված առաջարկությունների, բաշխել հետևյալ համամասնությամբ առաջին կիսամյակում

Հումանիտար 10-րդ դասարան- 3 ժամ,

հայոց լ.-1 ժամ, օտար լ.- 1 ժամ, հայոց պատմ.-1ժամ,

Բնագիտական 10-րդ դասարան-3 ժամ

/ տնտես./-օտար լ.-1 ժամ, ձեռնարկատիրություն – 2ժամ, ընդամենը – 3 ժամ,/

Հումանիտար 11-րդ դասարան-2.5 ժամ,

Հայոց լ.-1 ժամ,օտար լ.-1 ժամ,համ. պատմ.-0.5 ժամ,

Ֆիզմաթ 11-րդ դասարան-1.5 ժամ

ձեռնարկատիրություն-1 ժամ,

ֆիզիկա 0.5 ժամ,

Բնագիտական 12-րդ դասարան-6ժամ

Տնտես.-12-րդ դասարան-մաթեմատիկա – 2ժամ, ֆիզիկա-4 ժամ,

6.2- 2022-2023 ուսումնական տարվա ուսումնական պլանները՝ 10-11-րդ դասարաններ՝ տարեկան, 12-րդ դասարաններ՝1-ին կիսամյակ, ներկայացնել ՇՊՀ-ի համալսարանի ռեկտոր Ե.Սերոբյանի հաստատմանը:

6.3- 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասացուցակը և դասաբաշխումն /ընդհանուր ժամաքանակը՝ 412 ժամ / ներկայացնել ՇՊՀ-ի համալսարանի ռեկտոր Ե.Սերոբյանի հաստատմանը:

6.4 - 2022-2023 ուսումնական տարում ձևավորել 10 դասարան՝ ըստ համապատասխան համակզմի ու դասղեկների:

1.Հում. Xա դասարան- -23 աշ.դասղեկ՝ Մխիթարյան Անահիտ

2.Հում. Xբ դասարան- 22 աշ. դասղեկ՝ Խաչատրյան Լաուրա

3.Հում. Xգդասարան- 21աշ. դասղեկ՝ Մանուկյան Լաուրա

4.Բն. X դասարան – 25 աշ. դասղեկ՝ Վարդանյան Նունե

5.Հում. XIա դասարան –23 աշ. դասղեկ՝ Իգիթյան Արմինե

6.Հում. XIբ դասարան – 21 աշ. դասղեկ՝ Եղիազարյան Նարինե

7.Ֆիզմաթ XIգ դասարան- 14աշ. դասղեկ՝ Գալստյան Ելենա

8.Հում. XII՝ դասարան-30 աշ. դասղեկ՝ Կարապետյան Լիլիթ

9.Հում. XII՝ դասարան-26 աշ. դասղեկ՝ Մարտիրոսյան Գեղանի

10.Բնագիտական XII՝–18աշ. դասղեկ՝ Թառլոյան Լարիսա

Ընդամենը -223 աշակերտ, աղջիկ - 141, տղա - 82

6.5-2022-2023 ուսումնական տարում դպրոցում ձևավորել առարկայական 5 մեթոդական միավորումներ՝ հետևյալ նախագահներով՝

1.հ.լեզու և հայ գրականություն,ֆիզկուլտուրա,Ն.Զ.Պ.-Մանուկյան Լաուրա

2.ռուսաց և օտար լեզուներ-Ն.Վարդանյան

3.Հասարակագիտական առարկաներ-Լ.Խաչատրյան

4.Մաթեմատիկա,ինֆորմատիկա-Ս.Հարությունյան

5.Բնագիտական առարկաներ-Ն.Եղիազարյան

Լսեցին 7

Դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին,որը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա պետական չափորոշչին համապատասխան ուսումնական հիմնական ծրագրերի իրագործման խնդիրների վերաբերյալ համապատասխան գործառույթները.

Ղեկավարվելով ՇՊՀ-ի ավագ դպրոցի կանոնադրության համապատասխան դրույթներով, հիմք ընդունելով 2022-2023 ուսումնական տարում պետական չափորոշչի իրագործման խնդիրների, ինչպես նաև ուսումնական առարկաների չափորոշիչների ու ծրագրերի , ուսումնական պլանների ու դրանց կատարման մասին տնօրենի ԺՊ-ի ներկայացրած նախագծերը՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1.Դպրոցում 2022-2023 ուսումնական տարում պետական չափորոշչին համապատասխան՝ հիմնական ծրագրերը իրականացնել՝

սովորողներին ուսումնական բեռնվածությունը նրանց հակումներին ու ընդունակություններին, ինչպես նաև առողջության պահպանմանը համապատասխան,

ուսումնական հիմնական ծրագրերի իրագործում ՝ հաշվի առնելով սովորողների ընդունակություններն ու նախասիրությունները

ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացում,ատեստավորում և տարակարգ ՝ ըստ գործող կարգերի

2.Ուսումնական առարկաների չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերը իրագործել ուսումնական պլաններով՝ սահմանված շաբաթական ժամաքանակների կատարումով

3.Հանձնարարել տնօրենի ԺՊ-ին, տնօրենի տեղակալներին, մեթոդական միավորումների նախագահներին ստուգողական, բանավոր ու գրավոր առաջադրանքների, դասալսումների միջոցով վերահսկել ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված ծրագրային նյութերի ուսուցման բովանդակության և որակի կատարողականությունը:

Լսեցին 8

Դպրոցի տնօրենի ԺՊ-ին, որը ներկայացրեց դպրոցում 2022-2023 ուսումնական տարում արտադասարանական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համադպրոցական միջոցառումների պլանի հաստատման նախագծերը:

Առաջնորդվելով ՇՊՀ-ի ավագ դպրոցի կանոնադրության համապատասխան դրույթներով, հիմք ընդունելով 2022թ-ի օգոստոսի 31-ի մանկավարժական խորհրդի թիվ 1 նիստի թիվ 4 որոշումով ընդունված 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան զարգացման ծրագիրը/պլանը/՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1.Դպրոցում արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները կազմակերպել՝ հաշվի առնելով սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը, նրա փաստացի վիճակը և ծնողական խորհրդի առաջարկությունները

2.Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համադպրոցական միջոցառումների պլանը:

Ընթացիկ հարցեր1.

Ներկայացվեց 2022-2023 ուսումնական տարվա 10-12-րդ դասարանների դասղեկի ժամը ՝ըստ դասացուցակի:

2.Ներկայացվեց 2022-2023 ուսումնական տարվա 10-12-րդ դասարանների դասագրքերի անվանացանկը և ներդրումային գումարների չափը՝ ըստ դասարանների

3. Ներկայացվեց 2022-2023 ուսումնական տարվա 10-12-րդ դասարանների դասարանական ծնողական ժողովների , դասարանական և դպրոցական ծնողական խորհուրդների, աշակերտական համաժողովի, աշակերտական խորհրդի ընտրությունների, առարկայական մեթոդմիավորումների, դասղեկների, վարչական աշխատողների խորհրդակցությունների ժամանակացույցը

4.Ներկայացվեց 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական շաբաթները, աշնանային և ձմեռային արձակուրդները:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Կ.Դարբինյան

Քարտուղար՝ Գ.Բեգլարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2022թ-ի նոյեմբերի 10- ին տեղի ունեցավ ՇՊՀ-ի ավագ դպրոցի մանակավարժական խորհրդի նիստը՝ մասնակցությամբ մանկավարժական ողջ հանրույթի:
Օրակարգում՝

1.Ներդպրոցական առարկայական օլիմպիադաների կազմակերպում և անցկացում /զեկուցող ՈւԱ գծով տնօրենի տեղակալ Մուրադյան Ինեսսա /

Ընթացիկ հարցեր

Լսեցին 1.

Տնօրենի ԺՊ-ի ՈւԱ գծով տեղակալ Ի.Մուրադյանին, ով ներկայացրեց, որ նոյեմբերի 15-ից 19-ը ընկած ժամանակահատվածում դպրոցում տեղի է ունենալու ներդպրոցական առարկայական օլիմպիադաներ: Դրա հետ կապված հանձնարարություններ են ստացել մեթոդական միավորումների նախագահները, որպեսզի ժամանակին կարգավորեն կազմակերպչական աշխատանքները՝ ի նկատի ունենք, որ համատեղ կքնարկվեն առարկայական ներդպրոցական օլիմպիադայի տարբերակները, պատրաստվեն համապատասխան թղթային տարբերակով աշխատանքները և կապահովեն մասնակից աշակերտների ներկայությունը:

Որոշում է

Հավուր պատշաճի կազմակերպել ներդպրոցական առարկայական օլիմպիադան և նշանակել համապատասխան կազմակերպիչներ:

Ընթացիկ հարցեր

Տեղեկացվեց հանրույթին գալիք սպասվելիք կրթական բարեփոխումների նորությունների մասին՝հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների ներդրում, այսինքն ըստ նպատակի կիրառվելու է սովորողների ուսումնական արդյունքների գնահատման երեք տեսակ՝

1. հայտորոշիչ գնահատում,
2. ձևավորող գնահատում,
3. ամփոփիչ գնահատում:

1.Հայտորոշիչ գնահատման նպատակն է լինելու բացահայտել սովորողների նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա , կիսամյակի, առարկայական դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Հայտորոշիչ գնահատման ձևը ընտրելու է ուսուցիչը:

2.Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է լինելու բացահայտել յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումները, դժվարությունները և բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար: Ձևավորող գնահատումն իրականացվելու է 1-12-րդ դասարաններում , միավոր չի նշանակվելու:

3.Ամփոփիչ գնահատման նպատակն է լինելու ուսումնական առարկարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջարդյունքներին համապատասխան սովորողների ուսումնական ձեռքբերումների գնահատումը՝ դասի թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին , ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով: Ամփոփիչ գնահատումն իրականացվելու է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով: Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվելու է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա ՝ տարեկան ամփոփիչ գնահատականը: Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվելու է բնութագրման միջոցով, յուրաքանչյուր սովորողի համար կազմվելու է ուսումնական առաջադիմության բնութագիր: Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվելու է միավորային գնահատման միջոցով, այսինքն՝այն կիրառվելու է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած: Միավորային գնահատման դեպքում կիրառվելու է սովորողների գնահատման 10 միավորային սանդղակ, որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չի լինելու:Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումները:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Կ.Դարբինյան

Քարտուղար՝ Գ.Բեգլարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2022թ-ի դեկտեմբերի 16- ին տեղի ունեցավ ՇՊՀ-ի ավագ դպրոցի մանակավարժական խորհրդի նիստը՝ մասնակցությամբ մանկավարժական ողջ հանրույթի:
Օրակարգում՝

1.2022-2023 ուսումնական տարվա հունվարին անցկացվելիք պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպման ժամկետների և անցկացման աշխատակարգի, ինչպես նաև 120-200 ժամ բացակայություն ունեցող աշակերտների մասին / զեկուցող տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան /

2.Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների ,ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ/ կամավոր /ատեստավորվող ուսուցիչների մասին / զեկուցող տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան /:

3.Ներդպրոցական առարկայական օլիմպիադաների ամփոփում /զեկուցող ՈւԱ գծով տնօրենի տեղակալ Մուրադյան Ինեսսա /

4.Դասղեկական աշխատանքների, աշակերտների հաճախումների, դասարանների կարգապահության, աշակերտական և ուսուցչական հերթապահության մասին/ զեկուցող՝ ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ Չավուշյան Արթուր /,

Ընթացիկ հարցեր

Լսեցին 1

Դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին, ով ներկայացրեց 2022- 2023 ուսումնական տարվա հունվարին անցկացվելիք պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպման ժամկետների և անցկացման աշխատակարգը՝ /հիմք ընդունելով ՀՀԿԳՄՍ նախարարի 2022թ-ի դեկտեմբերի 6-ի N 78-Ն, ինչպես նաև դեկտեմբերի 14-ի 2022թ N 82-Ն հրամանները/:

Ելնելով ՀՀԿԳՄՍ նախարարի 2022թ-ի դեկտեմբերի 6-ի N 78-Ն,ինչպես նաև 14 դեկտեմբերի 2022թ N 82-Ն հրամանները մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1.2022-2023 ուսումնական տարվա հունվարին անցկացվող պետական ավարտական քննությունները կազմակերպել և անցկացնել՝

Հայոց լեզու և հայ գրականություն-10.01.2023թ

Մաթեմատիկա-11.01.2023թ

Հայոց պատմություն-12.01.2023թ

2.Տնօրենի ԺՊ-ին `որպես քննական կենտրոնի ղեկավարի հանձնարարել համապատասխան հրամաններով

2.1.քննական կենտրոնում քննության ընթացքը կազմակերպելու համար նշանակել հերթապահներ.

2.2.քննասենյակում քննության ընթացքը կազմակերպելու համար նշանակել քննության ընթացքի կազմակերպիչներ.

2.3.Կազմակերպիչներից մեկին նշանակել պատասխանատու կազմակերպիչ՝ համակարգելու քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը:

2.4.Ստեղծել քննական առաջդրանքները ստուգող հանձնաժողովներ.ստուգող հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե դպրոցի տնօրենի ԺՊ-ն է .

2.5.12-րդ դասարանների պետական ավարտական քննություններն անցկացնել քննությունների սկիզբը ժամը 10:00-ին:

Լսեցին 1.1

12-րդ դասարանների դասղեկներին , որոնք հաղորդեցին տեղեկատվություն մինչև 2022թ-ի դեկտեմբերի 10-ը ԳԹԿ կայք ներմուծած և հաստատված պետական ավարտական քննություններ հանձնողներին, ըստ էլեկտրոնային դասամատյանների դրական գնահատականների և թույլատրելի սահմանի բացակայությունների, պետական ավարտական քննություններին մասնակցելու թույլտվության մասին / կից ներկայացվում է աշակերտների ըստ համապատասխան առարկաների հանձնվելիք քննությունների թղթապանակը /:Ղեկավարվելով դպրոցի կողմից մշակված դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ-ի դեկտեմբերի 6-ի N 78-Ն, ինչպես նաև 14 դեկտեմբերի 2022թ N 82-Ն հրամանները մանկավարժական խորհուրդը

Որոշում է

12-րդ դասարաններում սովորող ներքոհիշյալ աշակերտներին, որոնք ունեն թույլատրելի սահմանի բացակայություններ / մինչև 120 ժամ / և քննական առարկաներից կանխատեսելի դրական գնահատականներ, թույլատրել մասնակցելու հունվարի 10-ից 12-ը անցկացվող պետական ավարտական քննություններին 12-րդ դասարանների 74 աշակերտներից՝ հայոց լեզու և հայ գրականություն-19 աշակերտներ, մաթեմատիկա -57 աշակերտներ, հայոց պատմություն - 57 աշակերտներ:

Լսեցին 2.

Դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին, ով ներկայացրեց հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների ,ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ / կամավոր / ատեստավորվող ուսուցիչների մասին: Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչներն էին. Կարինե Լուլիկյան- հայոց լեզու և գրականություն, Արմենուհի Գրիգորյանը- ռուսաց լեզու, Բելա Գաբրիելյանը- ռուսաց լեզու, Արփինե Սարգսյանը – անգլերեն լեզու, Գեղանի Մարտիրոսյանը- քիմիա, Ելենա Գալստյանը ֆիզիկա, Արթուր Չավուշյանը – հայոց պատմություն, Հարություն Հովհաննիսյանը – ՆԶՊ, Լարիսա Թառլոյանը – ֆիզկուլտուրա, ովքեր վերապատրաստումն անցան թիվ 1 ավագ դպրոցում, որը անցկացվեց 2022թ-ի հուլիսի 11-ից մինչև սեպտեմբերի 5-ը, իսկ մյուսները՝ Մարիամ Վարդանյանը – հայոց լեզու և գրականություն, Նունե Վարդանյանը – անգլերեն լեզու, Նաիրա Խաչատրյանը – գերմաներեն լեզու, Սաթենիկ Հարությունյանը – մաթեմատիկա, Անահիտ Իկիլիկյանը – կենսաբանություն , Անի Նահապետյանը – հայոց պատմություն, Լիլիթ Կարապետյանը – հասարակագիտություն վերապատրաստումն անցան <<Մասնակցային դպրոց կրթական հիմնադրամում>> 2022թ-ի հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը: Կից ներկայացվում է համապատասխան թղթապանակը:

ՇՊՀ-ի ավագ դպրոցից ունեցանկ նաև սեփական նախաձեռնությամբ / կամավոր / ատեստավորվող ուսուցիչներ: Ֆիզիկայի ուսուցչուհի Ելենա Գալստյանը և գերմաներենի ուսուցչուհի Լուսինե Իկիլիկյանը հաղթահարեցին քննությունները և ստացան աշխատավարձի 50% հավելավճար, իսկ անգլերենի ուսուցչուհի Նարինե Աբրահամյանը ստացավ

30% աշխատավարձի հավելավճար ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի 2022թ-ի նոյեմբերի 4-ի N 1348-Ա հրամանի համաձայն կնքեցին պայմանագրեր:

Որոշում է

Հանձնարարել դպրոցի օպերատորին հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների ստացած վկայականները,դիպլոմները և անձը հաստատող փաստաթղթերի պատճենները տեղադրել emis էլեկտրոնային համապատասխան բաժնում:

Լսեցին 3.

Տնօրենի ԺՊ-ի ՈւԱ գծով տեղակալ Ի.Մուրադյանին, ով ներկայացրեց, որ նոյեմբերի 15-ից 19-ը ընկած ժամանակահատվածում դպրոցում տեղի է ունեցել ներդպրոցական առարկայական օլիմպիադաներ: Կից ներկայացվում է համապատասխան թղթապանակը:

Որոշում է

Աշակերտներին նախապատրատել տարածքային և մարզային օլիմպիադաներին:

Լսեցին 4.

Դպրոցի տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Ա.Չավուշյանին ով ներկայացրեց դասղեկական աշխատանքների, աշակերտների հաճախումների, դասարանների, դպրոցի կարգապահության, աշակերտական և ուսուցչական հերթապահությունների կազմակերպման մասին ՝ ըստ դասղեկների ներկայացրած տեղեկատվության

Արտահայտվեցին- դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանը, որը նշեց ներկայացված բոլոր կետերը կազմում են կրթական գործընթացի կարևոր բաղադրիչները.դրանք պահանջում են ամենօրյա հետևողական աշխատանք: Դպրոցի ծնողական խորհրդի նախագահը / Հասմիկ Սահրադյանը / խիստ կարևորեց աշակերտների հաճախումների դինամիկայում ծնողական խորհրդի կարևոր գործառույթը՝ համագործակցելով աշակերտական և մանկավարժական հանրույթների, դասղեկների, դպրոցի տնօրինության հետ:

Առաջնորդվելով վերոհիշյալ հարցերի վերաբերյալ դպրոցի տնօրենի ՄԿԱ գծով տեղակալի, դասղեկների, ծնողական խորհրդի նախագահի կողմից ներկայացված համապատասխան կետերով ՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1.Կանոնակարգել դասղեկական աշխատանքները, աշակերտների հաճախումները, աշակերտների կարգապահությունը, աշակերտական և ծնողական , ուսուցչական հերթապահությունները՝ դրանք դարձնելով թափանցիկ, ապահովել դպրոցի տնօրինության և դասղեկների, ծնողական, աշակերտական խորհուրդների սերտ համագործակցությունը, լինել հետևողական՝ որպես կրթական գործի ակտիվ մասնակիցների, կրթական միջավայրը դարձնել առավել հետաքրքիր և աշակերտների և ուսուցիչների և ծնողների համար՝ նպաստելով ուսումնադաստիարակչական աշխատանքների աստիճանակարգմանը:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Կ.Դարբինյան

Քարտուղար՝ Գ.Բեգլարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2023թ-ի հունվարի 17-ին տեղի ունեցավ ՇՊՀ-ի ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի նիստը՝ մասնակցությամբ մանկավարժական ողջ հանրույթի:

Օրակարգում՝

1.ՇՊՀ-ի ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասաբաշխում, դասացուցակ, մանկավարժական համակազմի տարիֆիկացիոն ցուցակի ներկայացում /զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան /:

2.ՇՊՀ-ի ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի ամփոփում /զեկուցող՝ ՈւԱ գծով տնօրենի տեղակալ Ի.Մուրադյան,դասղեկներ/

3.2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում 12-րդ դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպման մասին / զեկուցող՝ ՈւԱ գծով տնօրենի տեղակալ Ի.Մուրադյան /

4.2022-2023 ուստարվա 2023թ-ի հունվարի 10-ից 12-ը ընկած ժամանակահատվածում պետական ավարտական քննությունների ամփոփում / զեկուցող՝ ՈւԱ գծով տնօրենի տեղակալ Ի.Մուրադյան /

Ընթացիկ հարցեր

Լսեցին 1- Դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին,ով ներկայացրեց ՇՊՀ ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասաբաշխումը, դասացուցակը, մանկավարժական համակազմի տարիֆիկացիոն ցուցակները պատրաստ են և ներկայացվելու են հաստատման,

Լսեցին 2- ՈւԱ գծով տնօրենի տեղակալ Ի.Մուրադյանին և 10-ից 12-րդ դասարանների դասղեկներին,ովքեր ներկայացրեցին՝
10ա դասարան-դասղեկ՝ Ա.Մխիթարյան

Աշ-ի թիվը-23, հարվածային՝ 9 աշ, բացակայությունը՝ 166 ժամ, առաջադիմությունը՝ 100 %, որակական առաջադիմությունը -0%:

10բ դասարան-դասղեկ՝ Լ.Խաչատրյան

Աշ-ի թիվը-22, հարվածային՝ 9 աշ.գերազանցիկ - 0 աշ, բացակայությունը՝ 122 ժամ, առաջադիմությունը՝ 95 %, որակական առաջադիմությունը - 0% ,անբավարար -1 աշակերտ:
10գ դասարան-դասղեկ՝ Լ.Մանուկյան

Աշ-ի թիվը-26, հարվածային՝ 7 աշ.գերազանցիկ - 0 աշ, բացակայությունը՝ 146 ժամ, առաջադիմությունը՝ 100 %, որակական առաջադիմությունը – 0%:

10դ դասարան-դասղեկ՝ Ն.Վարդանյան
Աշ-ի թիվը-23, հարվածային՝ 4 աշ.գերազանցիկ - 2 աշ, բացակայությունը՝ 293 ժամ, անբավարար -1 աշակերտ,առաջադիմությունը՝ 96 %, որակական առաջադիմությունը 9%:

11ա դասարան-դասղեկ՝ Ա.Իգիթյան

Աշ-ի թիվը-22, հարվածային՝ 4 աշ.գերազանցիկ - 5 աշ, բացակայությունը՝ 58 ժամ, առաջադիմությունը՝ 100 %, որակական առաջադիմությունը – 23 %:

11բ դասարան-դասղեկ՝ Ն.Եղիազարյան

Աշ-ի թիվը-23, հարվածային՝ 5աշ.գերազանցիկ - 4 աշ, բացակայությունը՝ 109 ժամ, առաջադիմությունը՝ 100 %, որակական առաջադիմությունը -18 %:

11գ դասարան-դասղեկ՝ Ե.Գալստյան

Աշ-ի թիվը-14, հարվածային՝ 6 աշ.գերազանցիկ - 3 աշ, բացակայությունը՝ 96 ժամ, առաջադիմությունը՝ 100 %, որակական առաջադիմությունը – 64 %:

12ա դասարան-դասղեկ՝ Լ.Կարապետյան

Աշ-ի թիվը-30, հարվածային՝ 9 աշ. գերազանցիկ - 6 աշ, բացակայությունը՝ 66 ժամ, առաջադիմությունը՝ 100 %, որակական առաջադիմությունը – 20 %:
12բ դասարան-դասղեկ՝ Գ.Մարտիրոսյան

Աշ-ի թիվը-26, հարվածային՝ 3 աշ.գերազանցիկ - 1 աշ, բացակայությունը՝ 369 ժամ, առաջադիմությունը՝ 100 %, որակական առաջադիմությունը – 4 %:
12գ դասարան-դասղեկ՝ Լ.Խաչատրյան

Աշ-ի թիվը-18, հարվածային՝ 5 աշ.գերազանցիկ - 3 աշ, բացակայությունը՝ 257 ժամ, առաջադիմությունը՝ 100 %, որակական առաջադիմությունը – 17 %:

Իր խոսքում ՈւԱ գծով տնօրենի տեղակալ Ի.Մուրադյանը նշեց, որ դպրոցում 2022- 2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ձևավորվել է 10 դասարան - 10-ից 12-րդ դասարաններում - աշակերտ համակազմով,գնահատվել են 227-ը, անբավարար գնահատական ունեն 2 աշակերտ, հարվածային աշակերտ 61,գերազանցիկ 24 աշակերտ, բացակայություն- 1682 ժամ, առաջադիմությունը՝ 99 % , որակական առաջադիմությունը՝ 16 %:

Լսեցին 3-ՈՒԱ գծով տնօրենի տեղակալ Ի.Մուրադյանին,ով հանգամանորեն ներկայացրեց 12-րդ դասարանների 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացը:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ-ի հուլիսի 20-ի N 54 –ն հրամանով հաստատված 2022-2023 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանի մանկավարժական խորհուրդը

Լսեցին 4- ՈՒԱ գծով տնօրենի տեղակալ Ի.Մուրադյանին, ով ներկայացրեց, որ 2022 թ-ի հունվարի 10-12-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի 06 դեկտեմբերի 2022թ-ի 78-Ն հրամանի համաձայն 2022-2023 ուստարվա 2023թ-ի հունվարին անցկացվող պետական ավարտական քննությունների կազմակերպման ժամկետները և անցկացման կարգը :

Հայոց լեզու և հայ գրականություն- մասնակցել են 19 աշակերտներից 18-ը,չի մասնակցել Զաքարյան Համլետը

,,19,,-2աշ.

,,18,,-4աշ.

,,17,,-5աշ.

,,16,,-3աշ.

,,14,,-3աշ.

,,13,,-1աշ.

Առաջադիմությունը-32%,

Հայոց պատմությանը մասնակցել են 57 աշակերտներ

,,19,,-7աշ.

,,18,,-4աշ.

,,17,,-8աշ.

,,16,,-4աշ.

,,15,,-6աշ.

,,14,,-4աշ.

,,13,,-15աշ.

,,12,,-1աշ.

,,11,,-1աշ.

,,10,,-5աշ.

,,9,,-1աշ.

,,8,,-1աշ.

Առաջադիմությունը-19%,

Մաթեմատիկա առարկայից մասնակցել են 57 աշակերտներից 55-ը, չի մասնակցել Պողոսյան Լևոնը և Քաբաբյան Վահեն:

,,19,,-1աշ.

,,18,,-4աշ.

,,17,,-9աշ.

,,16,,-4աշ.

,,15,,-8աշ.

,,14,,-3աշ.

,,13,,-13աշ.

,,11,,-2աշ.

,,10,,-5աշ.

,,9,,-2աշ.

,,8,,-4աշ.

Առաջադիմությունը-9%,

Որոշում է 1

2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասաբաշխումը, դասացուցակը, մանկավարժական համակազմի տարիֆիկացիոն ցուցակները ներկայացնել ՇՊՀ-ի ռեկտորի Ժ.պ. Ե.Սերոբյանի հաստատմանը:

Որոշում է 2

2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի արդյունքները մանրամասնորեն քննարկել առարկայական մեթոդական միավորումների, աշակերտական , ծնողական խորհուրդների նիստերում, դասարանական ծնողական ժողովներում, տնօրենին կից վարչականխորհրդակցություններում:

Որոշում է 3

2022-2023- ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում սովորողի շաբաթական ուսումնական բեռնվածությունը ձևավորել պարտադիր ուսումնասիրության <<Նախնական զինվորական պատրաստություն>>-1ժամ առարկայի և սովորողի ընտրության առնվազն 3 առարկայի ուսումնառության համար հատկացվածժամաքանակից՝ապահովելով առնվազն 31 դասաժամ

Նորմատիվային 34 դասաժամի և սովորողի ուսումնական պարտադիր բեռնվածության 31 դասաժամի տարբերությունից մնացած 3 դասաժամը տնօրինում էսովորողը

12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաներին /յուրաքանչյուրը 10-ական դասաժամ /ուսումնական պլանով հաստատված ժամանաքակը տալ այդ առարկաներին ուսումնական նյութի կրկնությանը/

Ըստ 12-րդ դասարանի սովորողի 2-րդ կիսամյակում ուսումնասիրության համար իր կողմից ընտրված առարկայացանկի կազմված յուրաքանչյուր սովորողի անհատական դասացուցակը ըստ խմբերի դասղեկների միջոցով հանձնել
/աշակերտների թիվը 74-ը ,74-ը աշակերտի անհատական դասացուցակ/:

2-Հաստատել ձևավորված առարկայական 10 խումբ,յուրաքանչյուր խմբում 3-ական առարկաներ՝ համապատասխան դասավանդող ուսուցիչներով:

Որոշում է 4

<u>Լսեսով 2022-2023 ուստարվա 2022թ-ի հունվարի 10-12-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած պատական ավարտական քննությունների արդյունքների ամփոփումը</u> մանկավարժական հանրույթը այն ընդունեց ի գիտություն

<u>Ընթացիկ հարցեր</u>
Ըստ համապատասխան ժամանակացույցի՝ հրավիրել առարկայական մեթոդականմիավորումների նիստեր աշակերտական, ծնողական խորհրդի նիստեր,
դասարանական ծնողական ժողովներ, դասղեկների , վարչական աշխատողների խորհրդակցություններ: Հանձնարարել դասղեկներին լրացնել աշակերտների անձնական գործերը ՝ ըստ 1-ին կիսամյակի ստացած գնահատականների: Հանձնարարել ուսուցիչներին , դասղեկներին ,առարկայական մեթոդական միավորումների նախագահներին կանոնակարգել 2-րդ կիսամյակի թեմատիկ պլանավորումները:
<<emis>> էլեկտրոնային մատյաններում որոշակի անճշտությունների մասով

դիմել ենք ԿՏԱԿ: Տրվել է ցուցումներ, թե որ ժամանակահատվածում է հնարավոր կատարել անճշտությունների շտկումներ:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Կ.Դարբինյան

Քարտուղար՝ Գ.Բեգլարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի 2023 թ. փետրվարի 24-ի (թիվ 5) նիստի արձանագրությունից

Լսեցին 1- Դպրոցի 12-րդ դասարանների դասղեկներ Լիլիթ Կարապետյանի և Լաուրա Խաչատրյանի հաղորդումները առ այն , որ 2022-2023 ուստարում գերազանցության մեդալի հավակնորդ են համարվում 2 ( երկու ) աշակերտուհիներ՝ հումանիտար հոսքի 12-րդ «ա» դասարանի աշակերտուհի Սուսաննա Գառնիկի Սարգսյանը և բնագիտամաթեմատիկական հոսքի տնտեսագիտական ենթահոսքի 12-րդ «գ» դասարանի աշակերտուհի Նարե Թովմասի Ֆարզադյանը, ովքեր 9-րդ դասարանն ավարտել են գերազանցության վկայականներով, 10-րդ, 11-րդ դասարաններում և 12-րդ դասարանի 1-ին կիսամյակում դրսևորել են գերազանց առաջադիմություն, ինչպես նաև 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից գնահատվել են 18-ից 20 միավոր, գերազանցության մեդալի հավակնորդներին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնելու մասին հարցը:
Արտահայտվեցին-Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ինեսսա Մուրադյանը, ով նշեց, որ երկու շրջանավարտների օրինակելի վարքն ու ունեցած գնահատականները համապատասխանում են որպես գերազանցության մեդալի հավակնորդ ներկայացնելու պահանջներին:

Որոշեցին- Առաջնորդվելով ՀՀ ԿԳ նախարարի 2012թ. մայիսի 3-ի № 388-Ն հրամանով՝ գերազանցության մեդալի հավակնորդ ներքոհիշյալ աշակերտների տվյալները ներկայացնել ՀՀ ԿԳՄՄՆ:

1.Սարգսյան Սուսաննա Գառնիկի

2.Ֆարզադյան Նարե Թովմասի

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Կ.Դարբինյան

Քարտուղար՝ Գ.Բեգլարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2023թ-ի ապրիլի 5-ին տեղի ունեցավ ՇՊՀ-ի ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի նիստը՝ մասնակցությամբ մանկավարժական ողջ հանրույթի:

Օրակարգում՝

1.ՀՀ կառավարության 2012թ-ի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշմամբ հաստատված «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման» կարգի պահանջի համաձայն 2022-2023թթ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցից վերապատրաստման և ատեստավորման ենթակա մասնակից ուսուցիչների մասով հաղորդում (զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան ):

2.ՀՀ կառավարության 2022 թ-ի ապրիլի 28-ին N 596-Ն որոշմամբ հաստատված «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման» կարգի պահանջների համաձայն՝ մեկնարկել է կամավոր ատեստավորման հայտերի ընդունելությունը (զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան ):

3.«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի նոր կառուցվածքային փոփոխությունների ծանոթացում (զեկուցող՝ դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյան ):

Ընթացիկ հարցեր

Լսեցին- 1

դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին, ով ներկայացրեց ՀՀ կառավարության 2012թ-ի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշմամբ հաստատված «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման» կարգի պահանջի համաձայն անհրաժեշտ է կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ ատեստավորման ենթակա ուսուցիչների անձնական գործերում, մինչև փետրվարի 8-ը

կատարել համապատասխան նշում՝ «ենթակա է ատեստավորման»: Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2023թ-ին համապատասխան նշումն անհրաժեշտ է կատարել այն ուսուցիչների համար, ովքեր ենթակա էին վերապատրաստման և ատեստավորման 2022թ-ին և ենթական են վերապատրաստման 2023թ-ին՝ ( հաշվի առնելով, որ 2022թ-ի այն ուսուցիչներն են վերապատրաստվել և ատեստավորվել, ովքեր 2020 և 2021 թթ ենթակա էին վերապատրաստման և ատեստավորման),ուստի անհրաժեշտ է մինչև մարտի 31-ը նշում կատարել նաև այն ուսուցիչների համար, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն ներկայացվել վերապատրաստման և ատեստավորման, բաց են թողնվել նախորդ տարիներին իրականացված վերապատրաստման և ատեստավորման գործընթացից կամ բավարար կրեդիտներ չեն ապահովվել:Այդ ուսուցիչներն են՝ Բեգլարյան Գոհար Վիկտորի – հայոց լեզու և գրականություն, Սարգսյան Նունե Զավենի - հայոց լեզու և գրականություն, Աբրահամյան Նարինե Հակոբի – անգլերեն լեզու, Մկրտչյան Կարինե Արշակի – անգլերեն լեզու, Իկիլիկյան Լուսինե Վիգենի – գերմաներեն լեզու, Սուլթանյան Աստղիկ Արշավիրի – մաթեմատիկա, Խաչատրյան Մելինե Վարդանի – մաթեմատիկա, Հովհաննիսյան Ալմարա Ռազմիկի – ինֆորմատիկա, Մանվելյան Անի Պարգևի – ֆիզիկա, Եղիազարյան նարինե Հենրիկի – կենսաբանություն, Պետրոսյան Գոհար Ռոբերտի- քիմիա, Խաչատրյան Լաուրա Սերյոժայի – պատմություն, Մխիթարյան Անահիտ Հարությունի- ֆրանսերեն լեզու:

Լսեցին- 2

դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին, ով ներկայացրեց, որ ուսումնական հաստատությունում դասավանդող միջին մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչներին, ովքեր «Հանրակրթության մասին» օրենքի 38 -րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի համաձայն՝ չեն համապատասխանում նշված օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջներին, կարող են շարունակել իրենց մասնագիտական գործունեությունը մինչև 2023թ-ի օգոստոսի 20-ը, եթե մինչև այդ չեն ապահովել ուսուցչին ներկայացված պահանջները: Ներկայացվեց նաև տնօրենի կողմից ՀՀ կառավարության 16 մարտի 2023թ –ի N 327 –Ն որոշումը ՀՀ կառավարության 2022 թ-ի ապրիլի 28-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Ըստ այդ որոշման 77.1 կետով 0-59 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչները ըստ ենթակայության, նախարարությունը ներկայացնում է լիազոր մարմնին՝ տնօրենի կողմից տվյալ ուսուցչի համար սույն կարգի 78-րդ կետով սահմանված վերապատրաստումն և վերաատեստավորման մասնակցությունն ապահովելու համար: Այդ ուսուցիչներն են՝ Լուլիկյան Կարինե Ավետիքի – հայոց լեզու և գրականություն, Մելքոնյան Արմեն Գրիգորի –պատմություն և Հովհաննիսյան Հարություն Թոռնիկի – ՆԶՊ:

Լսեցին- 3

դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանին, ով բուհի ստորաբաժանման՝ (ՇՊՀ-ի ավագ դպրոց) քննարկմանն ներկայացրեց «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված առաջարկությունները, կառուցվածքային փոփոխությունների հարցերով զբաղվող հանձնաժողովի կողմից ձևավորած բուհի նոր կառուցվածքի աշխատանքային տարբերակը (առդիր՝ 5 էջ):

Որոշեց 1

Դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանի հաղորդումը ընդունել ի գիտություն և հանձնարարել դպրոցի օպերատորին կրթության կառավարման տեղեկատվական համակարգում մինչև մարտի 31-ը նշում կատարել:

Որոշեց 2

Դպրոցի տնօրենի ԺՊ Կ.Դարբինյանի հաղորդումը ընդունել ի գիտություն:

Որոշեց 3

Տալ հավանություն կառուցվածքային փոփոխությունների հարցերով զբաղվող հանձնաժողովի կողմից ձևավորած բուհի նոր կառուցվածքի աշխատանքային տարբերակին:

Ընթացիկ հարցեր-

Առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցից հայոց լեզու և գրականություն առարկայից մասնակցեց հումանիտար 11-րդ «ա» դասարանի աշակերտուհի Հասմիկ Արմանի Նահապետյանը, ում աշխատանքը գնահատվել էր 13 միավոր:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Կ.Դարբինյան

Քարտուղար՝ Գ.Բեգլարյան